ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՎԻՏԱԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆՑԻՆ «Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱՋԱՏ ՋԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՎԻՏԱԼԻ ԳՐԻԳՈՐԵԱՆՑ, ՈՐ Ի ՄՈՍԿՈՒԱՅ, ՌԴ

Համայն հայութեան հոգեւոր կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնն ենք յղում Ձեզ՝ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր զաւակիդ:

Ցարգարժան պրն Գրիգորեանց,

Անձնապէս ճանաչում ենք Ձեզ եւ այսօր առանձնակի գոհունակութեամբ ենք անդրադառնում Ձեր բարի գործերին, որոնք միտուած են Ռուսաստանում բնակուող մեր ժողովրդի զաւակների ազգային-եկեղեցական կեանքը զօրացնելու ազնիւ նպատակին: Մենք տեղեակ ենք, թէ որքան մեծ աջակցութիւն էք բերում Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմին եւ յատկապէս Մոսկուայի Սուրբ Խաչ եկեղեցու կառուցման աստուածահաճոյ գործին, որը լինելու է առաջնորդանիստ եկեղեցին Տիրախնամ թեմի: Ռուսաստանում եւ մասնաւորաբար նրա մայրաքաղաք Մոսկուայում բնակուող մեր ժողովրդի բազմահազար զաւակներ, որ աղօթքի պիտի կանգնեն նորակառոյց եկեղեցում, մշտապէս երախտագիտութեամբ պիտի յիշեն Ձեզ եւ պատուարժան բոլոր հայորդիներին, ովքեր ջանք ու եռանդում ունեն եկեղեցու կառուցման ազգօգուտ գործում:

Այսօր արժան է յիշել նաեւ, որ Ձեր ազնիւ հովանաւորութեամբ լոյս ընծայուեց «Հայաստան, 1700-ամեայ հաւատարմութիւն» աշխատութիւնը, որը ռուսերէն լեզուով արժէքաւոր

Институт наук Армянской ССР
Фундаментальная библиотека

ուսումնասիրութիւն է նուիրուած Հայրենի մեր Երկրին, ժողովրդին եւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն:

Ամենակարող Աստուծոյ օրհնութեամբ Դուք Ձեր կարողութիւնները ծառայեցրել էք նաեւ Լուսաւորչապսակ մեր Սուրբ Աթոռի՝ համայն մեր ժողովրդի հոգեւոր նուիրական կենտրոն Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի շինութեանն ու պայծառութեանը: Դուք, արդարեւ, բարեգործ եւ հաւատաւոր զաւակն էք բարեպաշտ մեր ժողովրդի եւ արժանի Հայրապետական բարձր գնահատանքի:

Ցարգարժան պրն Գրիգորեանց,

Ընդառաջելով Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տ. Եզրաս եպիսկոպոս Ներսիսեանի ազնիւ խնդրանքին, Հայրապետական այսու Կոնդակով գոհունակ սրտով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՒՈՐԻՉ

պատուոյ բարձրագոյն շքանշանը:

Վստահ ենք, որ Մայր Եկեղեցու եւ հարազատ ժողովրդի հանդէպ Ձեր որդիական զգացումները պիտի շարունակուեն արդիւնաւորուել աստուածահաճոյ ձեռնարկներով՝ ի պայծառութիւն Նոր Նախիջեւանի եւ Ռուսաստանի հայոց թեմի եւ ի բարօրութիւն ռուսաստանաբնակ հաւատաւոր Մեր զաւակների:

Ի խորոց սրտի աղօթում ենք առ Բարին Աստուած, որ Իր Ամենախնամ Աջով հովանի լինի Ձեզ ու Ձեր ընտանեաց անդամներին՝ պարգեւելով քաջառողջ արեւշատութիւն, գործոց յաջողութիւններ եւ ամենայն բարիք:

Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնք. ամէն:

Օրհնութեամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ Կոնդակս ի 21-ն Ապրիլի
յամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 224